Միանալով վերակազմյալների շափավորական թեւին, Մ. Տամատյանը 1908 թ. համախոհների հետ հիմնադրում է Հայ-սահմանադրական ռամկավար կուսակցությունը, որի դրոշի ներքո որոշել էին միանալ արմենականները, վերակազմյալ հնչակյաններն ու սահմանադրականները: Նույն տարվա օգոստոսին Տամատյանը Վահան Թեքեյանի հետ անցնում է Պոլիս, այնտեղ հիմնելու ՀՍՌԿ-ի մասնաճյուղ: Նրա գրչին է դպրոցական 1910 թ. Աղեքսանդրիայում հրատարակված «Ռամկավարություն» տեսաբանական բնույթի աշխատությունը: 1912-13 թթ. Տամատյանը Կիլիկիայի ինքնադպրոցական կազմակերպման նպատակով լինում է Ալեppոում, Բեյրութում, Հալեպում ու Դյորթ Յոլում: 1915 թ. դառնում է ռամկավարների «Արեւ» դպրոցաթերթի հիմնադիրներից: Հաջորդ տարին մասնակցում է Եգիպտոսի Հայ ազգային միության հիմնադրությանը: Հայկական կամավորական շարժման կազմակերպման նպատակով նա որպես ռամկավար ներկայացուցիչ տեսակցություններ է ունենում Անգլիայի ներկայացուցիչ Մարկ Սայքսի եւ Ֆրանսիացի գնդապետ Բրեմոնի հետ: 1917 թ. Փարիզում Պողոս Նուբարի հետ խորհրդակցելուց հետո Միհրան Տամատյանը հնչակյան Սաղահզյուլյանի ու դաշնակցական Հանդամանի հետ մեկնում է ԱՄՆ, այնտեղ եւս հիմնադրելու Հայ ազգային միություն, ինչպես նաեւ զարկ տալու կամավորական շարժմանը: Որոշ ժամանակ Մ. Նահանգներում մնալուց հետո, Տամատյանը անցնում է Փարիզ, որպես խորհրդական Ազգային դպրոցական ու խմբագիր «Լա վուա դը լ'Արմենի»-ի: 1918 թ. սեպտեմբերին իտալական կառավարության մոտ Ազգային դպրոցական ներկայացնելու նպատակով Տամատյանը մեկնում է Հռոմ: Հաջորդ տարվա փետրվարին, Պողոս Նուբարի առաջարկով վերադառնում է Փարիզ, մասնակցելու այնտեղ կայանալիք Հայկական համագումարին, որն ընտրելու էր Ազգային դպրոցական նոր կազմը: Աղդիին իր ընտանիքին միանալու համար նա անցնում է Եգիպտոս, սակայն հոլիսին, Ամբողջական Հայաստանի դպրոցական Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ նշանակված լինելով, անմիջապես ուղեւորվում է Կիլիկիա:

1920 թ. օգոստոսի 4-ին Մ. Տամատյանի ջանքերով ու գլխավորությամբ կայ, հույն, արաբ ու ասորի բնակիչների կողմից Կիլիկիան հռչակվում է անկախ եւ Տամատյանն ընտրվում է վարչապետ: Նրա գլխավորած վարչապետությունը, ավա՜ղ, տեւում է մի քանի ժամ միայն, ֆրանսիացիների անողորմ միջամտության հետեւանքով: 1921 թ. հուլիսին Տամատյանը վերադառնում է Եգիպտոս, հիշ ժամանակ անց խանդավառությամբ իմանալով ՌԱԿ-ի կազմությունը Պոլսում: Կահիրեից Տամատյանը վերադառնում է Բեյրութ, ուր տարի վարելով Մանբաշյան ընկերության նորաբաց գրասենյակը: 1930 թ. նա Կահիրեի Ամիրայան առեւտրական տան հետ համաձայնելով, Բեյրութում բացում է նույնի մասնաճյուղը հանդիսացող ծխախոտի գործարան, որը երկու տարի դեկավարելուց հետո, երեք տարի էլ իր հաշվին է շարունակում այն, սակայն ի վերջո գործարանը փակվում է դպրական մենաշնորհի հաստատման հետեւանքով: 1936 թ. Բեյրութի ամերիկյան հիվանդանոցում Միհրան Տամատյանը վիրահատության ենթարկվելով, կորցնում է աջ սրունքը, որի 1893 թ. բանից փախուստ տալու ընթացքում հրազենի գնդակից փշրված ոսկորի վերջ կրկին բորբոքվել էր: Սա դատապարտ է դառնում, որ նա հրաժարվի «Զարթօնք» օրաթերթի հրատարակության ծրագրից ու վերջնականապես հաստատվի Կահիրեում:

Միհրան Տամատյանի գրչին են դպրոցական տղաներին նվիրված բազմաթիվ նյութեր: Նա աշխատակցել է Պոլսի «Մասիս», «Լույս», Փորթուգալյանի «Արմենիա», «Հնչակ», «Աղտակ», «Արեւ», «Բիզանդիոն», «Մարտ», «Շիրակ», «Օրենք», «Ազգ», «Փինիկ» եւ «Լուսաբեր» թերթերին: Հայտնի են նրա «Տալուռիկցի կտրիճ», «Հեռատ երկիր» եւ «Պանդուխտ մտեցին» հրատարակությունները: Նա ունի բարգմանություններ ֆրանսիական գրականությունից: Հայ դպրոցի նվիրյալ գործիչ մեզ է թողել հուշագրական երկու բեռավարս վոռձ, որոնք լույս են տեսել Կահիրեում ու Բեյրութում: Աղբիւրը գրի է առնվել ՌԱԿ-ի ղեկավարներից դրդ. Բարունակ Թովմասյանի կողմից, 1934 թ., երկրորդը Տամատյանի ձեռագրով, 1939 թ., որը հրատարակել է Պետրոս Տեփոյանը հեղինակ «Միհրան Տամատյան» աշխատության: 1985 թ. Բեյրութում դոկտ. Վաչե Ղազարյանի խմբագրությամբ լույս տեսավ ամբողջական հուշագրությունը:

Ահա թե իր հուշերում ինչ է գրում Տամատյանը «Կիլիկյան դպրոցի իսկական բնույթը եւ նշանակությունը» վերնագրի տակ: «... **Ժամանակ մը ի վեր արտասահմանի մամուլը եւ հայ գործիչներ, նույնիսկ ամէնէն ձեռնհասներէն եւ դպրասիրներէն, որոշիսիք են Ահարոնեան եւ Խաչատեան, կիլիկեան հարցին շուրջ կը դարձնեն տեսութիւններ, որոնք հեռի են իրականութիւնը ներկայացնելէ, եւ որոնք կիլիկեան դպրոցի իսկական բնոյթին եւ նշանակութեան մասին** գաղափարներ կը հրատարակեն: Անիկա սուր կերպարանք եւ կիզիչ այժմէութիւն ստացաւ այն օրէն, երբ Քեմալականներու արշաւանքին եւ աւերումին ենթարկուեցաւ ծանր վտանգի մատնելով այնտեղ ի նորոյ վերահաստատուած հարիւր յիսուն հազարէ աւելի հայութիւնը հայկական հոծ համախմբում մը, որուն նմանը Հայկական Հանրապետութեան արդի սահմաններէն դուրս, մեր հայրենիքի ոչ մէկ մասին մէջ կարելի է գտնել դժբախտաբար: Անիկա հայութեան համար կենաց եւ մահու խնդիր մը դարձաւ այն օրէն, երբ յայտնուեցաւ, թէ Դաշնակիցները Կիլիկիոյ մեծագոյն մասին վրայ կ'ուզեն վերահաստատել թրքական անիծեալ տիրապետութիւնը: Կիլիկիոյ հայութիւնը դիւանագիտական կացութեան եւ խղճական արդի իրականութեան խորապէս խելամուտ, բաստնց համոզուեցաւ, որ ներկայիս Կիլիկեան Հայաստանի մէկ նահանգը դարձնելու ձգտիլը եւ յամառիլը երազաստեսութիւն պիտի ըլլար: Բայց այդ պատճառ չէր, որ կիլիկեհայութիւնը յուսահատութեամբ անգամ մըն ալ ընդունէր դարաւոր դահիճին անարգ լուծը: Բայց դարձեալ պէտք չէ բնաւ մոռնալ, որ կիլիկեան այժմու հարցը հայկական նախաձեռնութեամբ ստեղծուած հարց մը չէ: Հայերը չէին որ աղաստամբեցան Դաշնակիցներուն կամ նոյնիսկ Թուրքիոյ դէմ: Քեմալիստ աղաստամբներն էին, ընդհակառակը, որ յարձակեցան հայ գիւղերու եւ քաղաքներու վրայ. Մարաշը կոտորեցին, Հաճընը պատարեցին եւ մինչեւ այսօր կը շարունակեն իրենց ասպատակութիւնը եւ յարձակումները. Կիլիկիոյ մէկ ծայրէն միւսը սուրի եւ հուրի մատնելով:

Ու դարձեալ, դպրոցական մը քաղաքական մարզին մէջ մտնելով, արդեօք իրաւունք չունի՞նք մեր կամքէն անկախ կերպով ստեղծուած դպրոցներէն օգտուելով եւ հիմնուելով մեր անցեալ ու ներկայ իրաւունքներուն վրայ եւ իբր նախաձեռնութիւն ազգային հաւանականութեանց ու դպրոցներուն, այժմէն ձգտիլ օժտելու Կիլիկիան Թուրքիայէն անկախ ինքնավար հիսուսնէնական վարչութեամբ մը եւ այս կերպով ստեղծել Կիլիկիա մը, որ այնպէս համամատէր Հայաստանին, ինչպէս Կրետէն երբեմն կը համամատէր Յունաստանին, Արեւելեան Ռումէլին Պուլկարիոյ: Կիլիկեան հարցի մը գոյութիւնը ուրանալը, կիլիկեան դատը լքելը պիտի նշանակէր 150,000 հայկական հոծ համախմբութիւն մը իր բախտին ձգել, կամ աւելի ճիշդ զայն գրուել աշխարհի չորս հովերուն, եւ նոյնիսկ ենթադրելով որ այս 150,000 հայութիւնը միահաղոյն անկարելի տրամադրութիւնը ունենար ամբողջովին Հայաստան փոխադրուելու, ո՞ր մէկ խելացի եւ հեռատես հայը պիտի յանձնարարէր անոր այսպիսի քայլ մը առանց նովին գործով վերջնականապէս հրաժարելու հայ ազգին դարերէ ի վեր սնուցած կիլիկեան աղազայ երազներէն եւ իդէալներէն: Կիլիկիան Հայաստանի աղազայ դպրոցիանը ըլլալու սահմանուած է, բացուած դէպի բաց ծովը, դէպի Եւրոպա, դէպի քաղաքակրթութիւնը: Բայց որոշեալ օր մը այդ դպրոցիանը բացուի, պէտք է այժմէն խորհիլ, քանի որ դպրոցները եւ ներկայ իրադարձութիւնները այդ ասիրը ընձեռած են այնտեղ դպրոցանելու աղաւով եւ բարգաւաճ հայութիւն մը: Այդպիսի հայութեան մը գոյութիւնը միայն ազգային իրաւունք պիտի տայ Հայաստանին իր սահմանները ընդարձակելու մինչեւ Միջերկրական եւ ոչ թէ դպրոցական մոռցուած իրաւունքներ եւ կամ աշխարհակալական ցանկութիւններ հայութենէ ամայացած հողամասի մը վրայ:

Ամէն հայ Կիլիկիոյ այժմու հարցին հանդէպ իր դիրքը որոշելու համար պէտք է հանգարտ ի մտի ունենայ, թէ Կիլիկիան հայկական նահանգներու Բենիամինն է, թէ Կիլիկիան Հայաստանի միջերկրականներուն գոհարն է, Հայաստանը դէպի ծովը բաղդ մագնիսը, անցեալ, ներկայ եւ ապագայ հայ սերունդներուն զրգանոյշ երազը: Մի մոռնար, որ այս տողերը գրողը հայկական նահանգներուն մեծագոյն մասը տեսած ու ճանչցած, բայց ան բայց չտեսած է:

Եթէ Կիլիկիոյ մասին կսկիծ կ'ուզէ լսել, այդ կսկիծը Աւետարանէն բաղուած միակ պարբերութիւն մըն է. «Մի՛ տայք զարբուիւնս շանց եւ մի՛ արկանէք մարգարիտս ձեր առաջի խոզոց»:

19-րդ դարի վերջում ու 20-րդ դարի սկզբում Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում ծավալված ազգային ազատագրական պայքարի դարբիններից հանդիսացող Միհրան Տամատյանը հայտնի է ելել իր անբասիր նկարագրով, մտավորական հեղափոխականի համբավով, իմաստուն ու երջանայաց գործունեությամբ: Նրա անունը սերտորեն կապված է Մշո ու Սասունի ընդոստությունների, «Կիլիկյան երազի», սիլիստրի կազմակերպման, ռամկավարական գաղափարախոսության տարածման ու հայրենիք-սիլիստ կապերի ամրապնդման հետ: Հայ ազատագրական պայքարի անենկուն մարտիկն ու ՌԱԿ Կենտրոնական վարչության նախագահը վախճանվեց 1945 թ. օգոստոսի 4-ին Կահիրեում: Նրա հոգնաբեկ մարմինը ամփոփվեց մեծ բանաստեղծ ու իր գաղափարակից Վահան Թեքեյանի կողքին: Արդար է ակնկալել, որ խորհուն ու իրատես ազգային քաղաքական գործչի մահվան 50-ամյակը առիթ կլինի հայրենիքում նույնպես լաւ արժանավայել գնահատելու նրա վաստակը դիմադրական շարժման կազմակերպման ու հայ քաղաքական մտքի զարգացման գործում:

ՀՈՎՍԵՓ ՅՈՐԳԵԿՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Տնտեսական ահաւոր ճգնաժամին դասճառով՝ Լիբանան հաղթական նոր փոթորիկներու սեմին

Լիբանանի հաղթահացիական դաստիարակը հազիւ վերջ գտած, 1992-ին սկսաւ Լիբանանը վերակառուցելու հսկայական ծրագիրներու գործադրումը ի հաշիւ... սնանկացած ու կործանած, տնտեսապէս ու բարոյապէս քայքայուած խեղճ լիբանանցի միջին ու համեստ խաւերուն: Մինչ արաբական ու Ծոցի երկիրներուն օգնութեան խոստումները մնացին թուղթի վրայ (Իրաքի դաստիարակին դասճառով միլիարդաւոր դոլլարներ ծախսուած են ամերիկեան ու ֆրանսական դահեսի զէնքերով օժտելու համար, գիւրաբեկելու համար մօտիկ ապագային...), Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրին եւ իրարայաջորդ կառավարութիւնները սկսան տարբեր եւ հարկահանութեան անաւոր արշաւ մը, լիաս Աբու-Ռըզքի (Քրիստոնեայ) կոչուող համընդհանուր գործադուլի եւ ցոյցերու, անցեալ 19 յուլիսին: Լիբանանի կառավարութիւնը հակադարձեց ցուցարարները ճզմելու նոր սպառնալիքներով, դասճառաբանելով թէ երկիրը կ՚անցնի հաղթական «փափուկ» շրջանէ մը...: Այսինքն, Իսրայէլի հետ հաղթական բանակցութիւններու ընթացքը իբրեւ դասճառ բռնելով, Լիբանանի տարադեալ ժողովուրդը դէտ է լռութիւն դահրանէր:

Յուլիս 19-ին ամբողջ Լիբանանը, իր Թրիփոլի, Բէյրութ, Սայդա, Սուր հաղթաքներով գործադուլի դիմած էր: Լիբանանի բանակին զրահաղաներն եւ ներքին ապահովութեան ուժերը փողոցներուն մէջ փորձեցին արգելք հանդիսանալ ցուցարարներուն, շարք մը անձեր ձերբակալելով ու խոշտանգելով: Սակայն, իսրայէլեան բանակը դարտութեան մատնող. Փինիկէի հինաւուրց մայրաքաղաքներէն Սայդան, բուռն ցոյցերով յայտնեց իր բողոքը: «Անօրի նեմ, ուզէ կ՚ուզենք», կը գոռային ցուցարարները, որոնք խրենց ճամփուն վրայ կրակի տուին ներքին ապահովութեան ուժերու զրահաղաս ինքնաշարժ մը: Լիբանանի բանակը շարք մը անձեր ձերբակալեց ու դաղեստինեան տարրեր ամբաստանուեցան որպէս «մուր ձեռներ»...:

Միւս օրերուն, Բէյրութի յառաջադիմական շրջանակներու դասկանող հեռուստատեսային կայան «Էլ-Թի-Վի»-ն, քրիստոնեայ-օրթոտոքս, Լիբանանի խորհրդարանի անդամ Նաժան Ուահիմ դիմակազերծեց վարչապետ Հարիրին եւ անոր շուրջ հաւաքուած կալուածատէր «շինարար»-ներուն իսկական գործունէութեանց էութիւնը: Ն. Ուահիմ մասնաւորաբար կեդրոնացաւ Բէյրութի առեւտրական շուկաներու վաճառքին վրայ, ըսելով թէ իշխող վերնախաւի սեփականութիւնը եղող «Սոլիդեր» ընկերութիւնը Լիբանանի 3 հազարամեայ մայրաքաղաքին այդ հոդաբերեալը այսօր հնգաղաստիկ գիներով ձեռք կ՚անցընէ ու կը վերավաճառէ օտար ընկերութիւններու եւ Ծոցի երկիրներու «էմիր-իշխանիկ»-ներուն: Իսկ բոլոդզերներով քանդուող էէնքերուն տակէն երեւան կուգան անգնահատելի գանձեր, դասմական ու մշակութային հնագոյն շինութիւններ ու բնակավայրեր, գերեզմաններ, ոսկի ու արծաթ, դրոշմ ու դրդիճ, որոնց արմատներ կը մխրճին մինչեւ քառասուն դարու մութեան մէջ:

Մի քանի օր առաջ միայն, տեղի տալով ժողովրդային ու հաղթական ճնշումներու առջեւ, Լիբանանի գերագոյն ատեանը ազատ արձակեց ձերբակալուած ցուցարարներէն շատեր, դրամական տուգանքներու ենթարկելով ոմանց: Հասկնալի դարձաւ, թէ Սուրիոյ դեկավարութիւնը չի փափագիր Լիբանանը տեսնել քաղաքական անկայուն վիճակին մէջ: Իսրայէլի հետ բանակցութիւններու այս ճակատագրական օրերուն: Բանուորական համադաշնակցութիւնը, ժողովրդային ճնշուած դասակարգերը սակայն, կը ծրագրեն գործադուլներու եւ ցոյցերու նոր ալիքներ դասրասցել, կոչ շերպոյտ համար Լիբանանը սեփական ազատակի վերածել փորձող նոր «հայրենասէրներու»: Իսկ ե՞րբ պիտի վերջ գտնէ Լիբանանցի ժողովուրդին «բաբելոնեան» գերութիւնը գիներ անխղճօրէն շահագործող նորելուկ կրեսոսներու կողմէ: ցոյց պիտի տան մօտեցող քաղաքական զարգացումները:

ՎԱՍՕ ՄՈՍԿՈՓԵԱՆ,
Բէյրութ

ՀԱՍՍՈՍ

Ադրբեջանի տարեկան նավթի արտահանումը՝ 1,5 մլն. տոննա

Ադրբեջանի Հանրապետությունը տարեկան 1,5 միլիոն տոննա նավթամթերք է արտահանում ափարհի տարբեր երկրներ, այդ թվում նաեւ Իրան, հաղորդում է «Թեհրան բայզզ» թերթը իր օգոստոսի 2-ի համարում՝ հենվելով ԻՈՆԱ գործակալության տեղեկությունների վրա:

Ներկայումս Ադրբեջանն ամսական 110-ից 125 հազար տոննա նավթամթերք է արտահանում Իրան, Ռուսաստան եւ Սեւ ծովի առափնյա երկրները: Մեջբերելով պետական նավթընկերության մի ներկայացուցչի խոսքերն Ադրբեջանի նավթարտահանման կարողությունների մասին, Թեհրան լրատու գործակալությունը նշում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Ադրբեջանից ներմուծում է ամսական 30-ից 35 հազար տոննա նավթամթերք:

Գազի եւ նավթի արտահանումներից Ադրբեջանն անցյալ տարի ստացել է 170 միլիոն դոլլար:

Ռոբոտները օգնության են հասնում գյուղատնտեսությանը

Կուալա Լումպուրից Թրանսդրես գործակալությունը հաղորդում է, որ Մալայզիան մտադիր է առաջիկա երկու տարիների ընթացքում արտադրել իր առաջին ռոբոտները, որոնք նախատեսված կլինեն գյուղատնտեսական աշխատանքների համար:

Տեղական պլանտացիաներում աշխատուժի զգալի պակասը ստիպել է իշխանություններին հիմնել 4,8 միլիոն դոլլար արժողությամբ ռոբոտների դասրասման կենտրոն, որի արտադրանքները պետք է օգտագործվեն կաուչուկի եւ յուղի հավաքման աշխատանքներում:

Ըստ նորաստեղծ ռոբոտների եւ արդյունաբերության ավտոմատացման կենտրոնի տնօրեն Ռոսլիսար Մաս Ալիի հաղորդումների, մալայզիացիները խուսափում են գյուղատնտեսության այդ աշխատանքները կատարել: «Գիտնականները կամ «Քայլող ռոբոտներ» պետք է արտադրեին, կամ էլ ծառից ծառ դեսվող հատուկ մեքենաներ», նշել է նա:

ՀԱՄԱՌՕՏ

ԱՄՆ-ում՝ 1 միլիոն կալանավոր

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 10 ՕԳՈՍՏՈՍ, WSJ: Մ. Նահանգների դաշնակցային եւ նահանգային բանտերում կալանավորների թիվն անցյալ տարվա ընթացքում ավելացել է 83 հազարով: Արդարադատության բաժանմունքի տվյալներով՝ կալանավորների ընդհանուր թիվն անցել է 1 միլիոնը:

Ջրհեղեղ Իսպանիայի կենտրոնում

Առնվազն 7 մարդ զոհվել եւ չբացահայտված թվով անձինք են անհետ կորել տեղատարափ անձրեւներից առաջացած ջրհեղեղի հետեւանքով, որը տեղի է ունեցել լույս հինգշաբթի օրվա գիշերը Իսպանիայի կենտրոնում՝ Գվադալախարայի նահանգում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդումների համաձայն, առավել շատ տուժել է Յերբա ավանը, որտեղ հեղեղը էլեկտրաէներգիայի սյուներ է տարել է տասնյակ տներ: Տեղական իշխանությունների որոշմամբ ստեղծված են փրկարար ջոկատներ, որոնք օգնություն են ցույց տալիս տուժածներին, որոնում անհետ կորածներին: *Ասոշատրես*

ԳԵՐՄԱՆԻԱ

Խմբագիրը պետք է լինի իրավաբան, տնտեսագետ, կենսաբան եւ նոր միայն ժուռնալիստ

Վերջերս, ազատ լրագրության խնդիրներով մասնագիտացված գերմանական հայտնի Sage und schreibe ամսագիրն անցկացրեց սոցիոլոգիական հարցում մամուլի ներկայացուցիչների շրջանում, որի արդյունքները «ապշեցուցիչ էին»: Յուրահատուկ խոստովանությունների ընթացքում պարզվեց, որ շատ բերթերի գլխավոր խմբագիրները, մեղմ ասած, չեն աղահովում պատշաճ մակարդակ: Ավելին, որակյալ խմբագրի համար կարեւոր մասնագիտություններ համարվեցին իրավաբանությունը, տնտեսագիտությունը, արտադրության կազմակերպումը եւ... կենսաբանությունը: Երկրորդ տեղում էին հումանիտար կրթության՝ գերմանագիտության, պատմության եւ հոգեբանության ոլորտները: Հարաբարակախոսությունը եւ ժուռնալիստիկան նշվել են վերջում: Պարզվեց, որ մասնագիտությամբ լրագրողները, որեւէ առավելություն չունեն այլ կրթություն ստացած լրագրողներից: Բացառություն էին կազմում Դորտմունդի համալսարանի շրջանավարտ-լրագրողները, որոնց ուսումը համապատասխան դրակտիկ գործունեությունից զատ, ենթադրում է նաեւ 12 ամսյա դարտադիր աշխատանք օրաթերթում: Ժուռնալիստիկայի հետազոտական ինստիտուտի (Հանովեր) տվյալների համաձայն, արեւմտագերմանացի լրագրողների միայն 35 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, մինչդեռ արեւելյան երկրամասերում այդ ցուցանիշը գերազանցում է 70 տոկոսը: Գերմանական լրագրության ամենից բույլ օղակը ճանաչվեց երիտասարդ սերնդի գերազանցապես տնտեսական բնույթի դարտասվածությունը: Հարարակվեցին նաեւ օրաթերթերի գլխավոր խմբագիրների ամսական դրույքները. նվազագույնը 1995-ի դրությամբ 2320 մարկ (տուրք 1650 դոլլար), առավելագույնը՝ 8133 մարկ (տուրք 5700 ԱՄՆ դոլլար): Ա. Ղ.

Որ շարվեն ամերիկա-չինական հարաբերությունները

Վաշինգտոնին անհարմար դրության մեջ չդնելու նպատակով Տայվանի նախագահ Լի Տենգ Հուին որոշել է չմասնակցել Տայվանի եւ Ամերիկայի գործարարների տարեկան հանդիպումը, որը տեղի է ունենալու Ալյասկայում առաջիկա սեպտեմբերին: Այս մասին է հաղորդում «Թեհրան բայզզ» թերթն իր օգոստոսի 2-ի համարում:

Ասուշիյբեդ դրես գործակալության թղթակիցը Տայվանից նշել է, որ Տայվանի ազգային անվտանգության գլխավոր խորհուրդ Դինգ Սուշին Լիի որոշման մասին տեղյակ է դարձել ամերիկյան պետդեպարտամենտին:

Անցյալ տարի Ալյասկայի հանրապետական կուսակցությունից սենատոր Ֆրենկ Մուրկովսկին հրավիրել էր Լիին մասնակցելու ամերիկա-տայվանական տնտեսական համագործակցության կոնֆերանսին՝ հակառակ Պեկինի կառավարության բազում բողոքների, որն ինչպես հայտնի է, Տայվանը դիտում է որպես ապստամբ շրջան առանց ինքնակառավարման իրավունքի:

Վաշինգտոնը, որը 1979-ից ի վեր Պեկինի հետ հաստատել է դիվանագիտական հարաբերություններ, անցյալ ամիս զայրացրեց վերջինիս՝ Լիին հրավիրելով մասնակցելու իր մայրաքաղաքի՝ Կոռնել համալսարանի շրջանավարտների տարեկան հավաքին: Շնայած այցելությունը դաշտոնական բնույթ չէր կրում, այն Պեկինի կողմից դիտվեց որպես հաղթանակ այն բազում ջանքերի, որ Տայվանը գործադրում է իր մեկուսացված վիճակից դուրս գալու համար: Որպես բողոքի նշան Չինաստանն անմիջապես եռ կանչեց Վաշինգտոնի իր դեսպանին, զգուշացնելով Միացյալ Նահանգներին, որ ամերիկա-չինական հարաբերությունները կարող են խաթարվել, եթե նրանք շարունակեն գործակցել Տայվանի հետ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Ազգի» գրադարան

Եվ այսպես, սիրելի գրաբեր ընթերցող, այսուհետև մեր թերթի էջերում դու կունենաս քո փոքրիկ անկյունը, ուր կծանոթանաս գրական կյանքի ժամանակակից նորություններին՝ հրատարակվող գրքեր, գրական կայքեր, երեկույթներ, գրույցներ եւ հարցազրույցներ, մտքերի ու տեսակետների խաչաձեւումներ... մի խոսքով՝ ամենաբազմազան ու հետաքրքիր տեղեկատվություն: Կարող է հարց ծագել. դրա ժամանա՞կն է, արդյոք: Վստահ ենք, որ այո, քանի որ հակառակ գրականության մահացման, վախճանի մասին հաճախակի հնչող տագնապների, առավել քան համոզված ենք, որ գրականությունը չի մեռել, չի մեռնում եւ չի կարող մեռնել՝ հենց թեկուզ այն ոլորշ դատաառով, որ ինչպես ուղիղ մեկ դար առաջ նույն այս հարցի կապակցությամբ իմաստնորեն գնդում էր զգայուն բանաստեղծը՝ Ինտրան. «...ըսել թե բանաստեղծությունը գլխի վախճանի օր մը...: Ասիկա նշանակել թե սիրտը գլխի վախճանի. զգացմունք գլխի շիթաթին այլեւս, մարդուն տմենեն երկնային, գլաշելի եւ բնական մասը գլխի մարի, ջնջվի, անհետանա»: Ահա, ուրեմն, այն գիտակցությամբ, թե գրականությունը, արվեստը, մշակույթը ընդհանրապես, ժողովրդի հասարակական կյանքի ոչ միայն կարեւոր, այլեւ հիմնարար ու էական մասն է, բացում ենք մեր «Գրադարանը», ուր տեղ կգտնեն գլխավորապես արդի գրական ընթացքի ուշագրավ, արժեքավոր երեւույթները, մանավանդ որ այդպիսիք իրոք կան եւ ոչ քիչ թվով: Հետեւեցեք եւ բերեք ձեր մասնակցությունը՝ նամակներով, կարծիքներով, դարձյալ վերաբերմունքով:

Նոր մատենաշար

Թերեւս մեր օրերի համար զարմանալի է, բայց փաստ, որ գրական ընթացքը հարատեւում է մի մատենաշարի սկզբնավորմամբ: Խոսքը «Վան Արյան» նորաստեղծ հրատարակչական-տպագրական համալիրի կողմից հրատարակվող «Արդի հայ բանաստեղծություն» մատենաշարի Փիմենաքի եւ Հովսեփյան Վան Արյան մասին է. որի անդրանիկ գիրքը արձակագիր-դրամատուրգ-բարգմանիչ Վարուժան Նալբանդյանի «Ռադամես» երեք գործողությամբ ողբերգությունն, արդեն ընթերցողների սեղանին է:

Մատենաշարի հղացման եւ իրագործման հետ կապված արժե նշել դրվագելի մի քանի հանգամանք.

Նախ գրական ընթացքին հետեւողներ հոյ գիտեն, թե տասնամյակներ շարունակ ինչպիսի գրեթե անլուծելի դրդրկեմ էր որեւէ բաբեռագրական երկ տպագրելը, կիրեն այն ծավալուն բանաստեղծները, որ մղվում էին գոնե «Արվեստ» ամսագրում դրանք տպագրելու համար: Ներկա մատենաշարը, թերեւս մասամբ, խուսանում է լուծել այդ շատ կարեւոր խնդիրը:

Երկրորդ՝ արձակագիր, լրագրող, նկարիչ, հրատարակիչ Վան Արյանը, որ այս գործի նախաձեռնողն է եւ տիպոգրաֆիայի տարին ու ոգուն եւ իրեն չի վերապահել տպագրվող երկերի ընտրության մենաշնորհը: Ինչպես նշված է անդրանիկ գրքում, ստեղծագործությունների ընտրման եւ հրատարակման երաշխավորելու աշխատանքներ տարվում են Հայաստանի գրողների միության դրամատուրգների սեկցիայի հետ համատեղ:

Եվ երրորդ՝ ինչպես դարձյալ տեղեկանում ենք անդրանիկ գրքից. «Արդի հայ բանաստեղծություն» մատենաշարի գրքերը տպագրվելու են բացառապես բարեգործական հիմունքներով. այսինքն գրքից ստացված ամբողջ հասույթը ուղղվելու է հեղինակներին:

Այսմանից հետո միայն կարելի է ԲԱՐԻ ԵՐԹ մաղթել մատենաշարին եւ շնորհակալության խոսքեր ասել այն նախաձեռնած Վան Արյանի հասցեին: Ինչ վերաբերում է Վ. Նալբանդյանի «Ռադամես» ողբերգությանը, առա այն, թե գրքի ծանոթացման, «վաստրեն «Այոյա» օպերայի լիբրեսոյի շարունակությունն է դրամատիկական ժանրի տեսքով:

Իր բնույթով բացառիկ այս ստեղծագործությունը գրվել է բանչորս տարի առաջ, ինչ-ինչ դաստաառներով ոչ բեմադրվել է, ոչ լույս տեսել»:

Թերեւս հառորդ դար անց այն ավելի համահունչ լինի մեր ժամանակներին:

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՌԱԴԱՄԵՍ

ԱՐԻՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ

Հրատարակվել է ՀԲԸՄ «Ալեմ Մանուկյան» մատենաշարով

Ո՞վ է սրում գիլյոտինի դանակը...

Գրողներ կան, որոնք իրենց ստեղծագործական դիմագիծը գտնելու համար որոշակի ճանապարհ անցնելու անհրաժեշտություն ունեն, կան նաեւ այնպիսիք, որոնք առաջին իսկ գրվածքներով պարզում են իրենց գրողական էությունն ու հավատամքը, աշխարհին նայելու ուրույն կերպը, նախընտրելի հերոսի տեսակը: Հենց այդպես՝ ասես հանկարծակի ու միանգամից, «Հրաշք նժույգներ» (1983 թ.) անդրանիկ ժողովածուով ընթերցողներին ներկայացավ Ռաֆայել Նահապետյանը: Ու... ընդունվեց, գնահատվեց: Ավելին՝ սիրվեց: Եւ դա արդեն ինչ որ բան նշանակում էր, անշուշտ: Ու մինչեւ անգամ ընթերցողներից եւ քննադատներից նրանք, որոնք վեթեր ունեին երիտասարդ արձակագրի հետ՝ «ավելորդ» ոճական տիկնականության, իդեալիզմի եւ այն ժամանակներում մոդայիկ այլ իզմերի անխորտակելի թվացող դիտանկյուններից, չէին կարող չընդունել գլխավորը՝ Հրաշալիի, Գեղեցիկի, կյանքին բեւեռվող հոգեկան Սլացքի պաշտամունքը, որ շնչում էր գրողի ամեն մի տողում:

Երբեմն բանաստեղծ-արձակագիր է Ռաֆայել Նահապետյանը: Նրա տարերքը փոքր, սեղմ ձեւերն են: Հերոսները, տարբեր լինելով իրենց սոցիալական պատկանելությամբ ու վիճակով, կյանքում զրաված տեղով ու դերով, ունեն հոգեկան կերտվածքի ընդհանրություններ, որոնք բաց են անում արձակագրի իդեալների ու նախասիրությունների «գաղտնիքները»:

Մեծ ու գունավոր երազներ ունեն նրանք, բոլորի, երկնի կարոտ, գեղեցիկի, վեհի ու հրաշալիի սրված զգացողություն, բարեկիրթ են ու խելոք, ցավի կրողներ, մի միայնամիտ են, մի միայնամիտ, կողից մի միայնակ տարօրինակ, բայց անոյշության ազնիվ, ու բարի, ու արդար: Իրականության ամենաանշան բվացող ազդեցությունն անգամ ազդում է այդ նուրբ հոգիների վրա: Նրանք, մի տեսակ, անոյշաբոյր են, բաց ու խոցելի՝ իրականության սրի ու կեղծիքի, նենգության ու բռնությունների հանդեպ: «Երազանք» պատմվածքի «խոշոր ու զարմացած այրերով, ճակատին սպիտակ երկար բիծ ունեցող» ծիրանը ամբողջովին բրթում է բեւեռներ ունենալու, թռչելու եւ լազաս լինելու երազանքով, նրան սարսափեցնում է բեռնածի լինելու մոր ճակատագիրը եւ երբ գալիս է ընտրության պահը՝ ծիրանը առանց տատանվելու նախընտրում է ազատությունն ու երազանքը, ընդրուս սլացքով դուրս թռչում ախոռից ու... դառնում գաղտնիք, լեգենդ:

Այս հերոսը շատ ցավագին է տանում կոպիտ իրականության հետ բախման դրամատիկ: Հոգեկան ու մտավոր հայացքի խորաթափանցությամբ տեսնում է հասարակության մեջ իշխող դիմակների առատությունը. «Ոչինչ, ամեն ինչ հրաշալի է» պատմվածքի ուսանող հերոսի նման դառնությամբ հաստատում, որ «... մարդիկ միայն այն չեն, ինչ երեւում են կամ ցանկանում են երեւալ»:

Ժողովածուի հավաքական հերոսի բերեւս ամենաէական գծերի բնութագիրը հեղինակը տալիս է «Մեղեդի երեւակայական ջուրակի համար» պատմվածքի հետեւյալ տողերում. «Մարդկանց մեծ մասը սեփական երջանկությունն էր կռում ու աղաղակ ապագան (գոնե փորձում էին), իսկ սրանք՝ այս թիթեռային անվնաս էությունները, բեւիկները այրելով, անլաց ու անբողոք, հրաշալի գիտակցված իրենց կործանումն էին գնում: Բոլորի այրերի առջեւ: Անտարբեր հայացքների ներքո»:

Որոշ կանոն այսպիսին են, ահա, Ռ. Նահապետյանի հերոսները՝ աշխարհ են մտնում մեծ ու գունավոր երազներով, բախվում իրականության խռչուխությունին ու դարձյալ պարփակվում իրենց «հասկանալի» աշխարհի մեջ՝ «հոգում եղած ասելիքը Աստծուն ու աշխարհին մատուցելով»՝ երեւակայական ջուրակի միջոցով:

Այնուամենայնիվ, արտաքինից բույլ ու անպաշտպան մարդու այս տեսակը, ըստ էության, իներտ չէ: Նա մարդկանց, շրջապատի վրա ազդելու իր լծակներն ունի: Նույնիսկ կպչողանում է վերափոխել մարդկանց, արթնացնել ննջած խիղճը, անտարբեր քաղաքացիների հոգիների խորքերից լույս աշխարհ հանել ազնվության, կարոտի, կարեկցանքի զգացողությունը, ոչ պատահական անձնավորություն, այնուամենայնիվ, հավատարիմ է մնացել օրյակներ: Եւ այդ ամենը տոսկ... իր գոյությամբ, դրամատիկ, երբեմն ողբերգական ճակատագրով: Այն ասիճան, որ սիրում է «Հայելու մեջ չարտացոլված ինչ որ բան» պատմվածքի կատարյալ քաղաքացած հերոսուհուն՝ Վիշապազարդին, թեկ «հայելու մեջ երեւացող իր արտացոլանքին»:

Արձակագիրը մեծ կարեւորություն է տալիս կյանքի երեւույթների ընկալման չափանիշին, ընկալողի ես-ի, անհատական տեսակի խնդրին, «Սարդը» պատմվածքի հերոսների նման ընթերցողներին եւս մղելով ոչ պարզ մտորումների այն հարցի շուրջ, թե «այդ ինչպես է, որ նույնը նաեւ ուրիշ է»:

Ժողովածուն դիպուկ ու տրամաբանական ավարտ ունի: «Հաշվեհարդար» պատմվածքը, ըստ էության, ընդհանրացնում է Անհաղը եւ Ամբոխը հակադրության գրողի տեսանկյունը: Այստեղ եւս հերոսը՝ խելոք ու կիրթ մի երիտասարդ, ամբոխի կողմից անարդարացիորեն մեղադրվում է չգործած հանցանքի մեջ: Եւ ամբողջ պատմվածքը վեր է ածում անարդարությունից պոռթկացող ազնիվ հոգու ճիչի, յուրատեսակ մեղադրականի՝ մարդու ցավին ու ճակատագրին անտարբեր հասարակության հանդեպ: Գալիս է ոստիկանությունը: Հերոսն առաջարկում է ամբոխին չցրվել, որովհետեւ՝ «Ցանկանում էիք տեսնել, թե ինչպես են հաշվեհարդար տեսնում ձեզ նման մեկի հետ եւ ուրախանալ այն մտից, որ դա դուք չեք: ...Իսկ դուք, մնացած բոլորդ, վայելեք ձեր անդուր, բայց հետաքրքիր ներկայացումը: Սակայն եթե երբեւէ, օրերից մի օր, իզուր ադրած կյանքի ամենոր կասկածը ծնվի ձեր ներսում, աշխատեք հետաքրքրվել ու պարզել՝ թե ո՞վ է սրում գիլյոտինի դանակը, եթե դահիճը իր արժանավորությունից ցածր է համարում այդ գործը անել...»:

Համաձայնեմ՝ չափազանց սուր վերջաբան: Բայց նաեւ սթափեցնող, տագնապի ազդանշան հնչեցնող, արթնացնող: Արժանիներ, որ հասուկ են, անկասկած, ճշմարիտ գրականությանը: Իսկ Ռաֆայել Նահապետյանի արձակը հենց այդպիսին է:

ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳԱԳԻՐ

Ազգային օպերայի եւ բալետի թատրոն

Շաբաթ օրը հանդիսատեսը կարող է դիտել «Անուշ» օպերան: Բեմադրությունը՝ Տիգրան Լեւոնյանի, Անուշի դերում հանդես կգա Լ. Մարյանը, Սարոյի դերում՝ Ա. Ավանյանը, Մոսիի դերում՝ Կ. Սիմոնյանը: Սկիզբը՝ ժամը 14 ին:

Արիոն թատրոն

Կիրակի օրը էդգար Էլբակյանի անվան Արիոն թատրոնը կներկայացնի Ջորայր Խալափյանի «Սիրո տարբեր նկարներ» նոր բեմադրությունը: Սկիզբը՝ ժամը 17 ին:

«Նահիրի» կինոթատրոն

Շաբաթ եւ կիրակի օրերին կինոթատրոնում կարելի է դիտել «Արցունքներ անձրեւի տակ» ամերիկյան ֆիլմը (գլխավոր դերում՝ Շերոն Սթոուն): Սկիզբը՝ ժամը 11 ին, 12.40 ին, 14.20 ին, 16 ին, 17.40 ին, 19.20 ին, 21.05 ին: Իսկ ամերիկյան «Հեղեղ» ֆիլմը (գլխավոր դերում՝ Մայքլ Գրոս) կցուցադրվի ժամը 12 ին, 15 ին, 19.25 ին: Բուրաստանի սրահում կցուցադրվի «Սպիտակ հրեշտակ» ֆիլմը (ԱՄՆ): Սկիզբը՝ ժամը 10.30 ին, 13.30 ին, 17 ին:

ԳՈՒՅԺ

Մահացավ Ջերրի Գարսիան

ՖՈՐԵՍՏ ՆՈԼԶ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ), 10 ՕԳՈՍՏՈՍ, WSJ: Սրտի կաթվածից այսօր մահացավ 53 ամյա ռոք կիթառահար Ջերրի Գարսիան, որն իր «Գրեյթֆուլ Դեդ» խմբով խորհրդանշում էր 60 ականների ամերիկյան հակաբաղաքակրթական շարժումը եւ երեք տասնամյակ շարունակ մնում էր ամենամեծ ժողովրդականություն վայելող շոուբիզի ներկայացուցիչներից մեկը: Արվեստագետի մահվան պատճառը, ինչպես հաղորդեց BBC ռադիոկայանը, երկար տարիների ալկոհոլամոլությունն է եղել: Կիթառահարի մասին ավելի մանրամասն կտեղեկացնենք մեր թերթի առաջիկա համարներից մեկում:



ՀԱՄԱՌՈՏ

Ֆիլմերի շաբաթը՝ սեպտեմբերին

Մեր թերթում «Զարթնի» տեղեկության հիման վրա հաղորդել էինք, որ հուլիսի վերջին հայկական ֆիլմերի շաբաթ է անցկացվել Բեյրութում: Տեխնիկական պատճառներով շաբաթը (ծրագրում՝ Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը», Վիգեն Չալդրանյանի «Չայն բարբառ», Ատոմ Եգոյանի «Օրացույց», Գասպար Տերտերյանի «Ցնորք», Սուրեն Բաբայանի «Արյուն», Հարություն Խաչատրյանի «Վերջին կայան») չի կայացել եւ հավանաբար կանցկացվի սեպտեմբերին:

«Հրաբխին» սպասում են Լիբանանում

Լիբանան հյուրախաղերի մեկնելու է պատրաստվում «Հրաբխ» մանկական ազգագրական խումբը: Դրա հարուստ ծրագրում կան ժողովրդական երգեր ու պարեր, յուրօրինակ բալետային ու մարզական համարներ: Անսովոր է այդ եզակի ստեղծագործական խմբի մասնակիցների տարիքը՝ 2-5 տարեկան: Ներկայացուցչական ժյուրին ընտրել է 30 տաղանդավոր տղաների եւ աղջիկների: Առաջիկա ուղեւորությունը առաջինը չէ «Հրաբխի» կենսագրության մեջ: Արդեն գրվել է փոքրիկների՝ ԱՄՆ-ում ունեցած հաջողության մասին: Տարբեր պատճառներով խումբը ժամանակավորապես դադարեցրել էր գործունեությունը: Ներկայումս հիմնադիր Հայկազ Շահբազյանի ղեկավարությամբ այն պատրաստում է նոր համերգացանկ, որը անկասկած, մեծ գոհունակություն կպատճառի հանդիսականներին:

Մկրտ

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով խրախուսել ազգային-գեղարվեստական մշակույթի տարբեր ասպարեզներում ստեղծվող արժեքավոր երկերը, Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը սահմանում է «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակ:

Մրցանակի կարող են ներկայացվել 1994 թ. հրապարակված կամ կատարված գրական, հրապարակախոսական, երաժշտական, բատերական, կինոնամատագրական ստեղծագործություններ, կերպարվեստի գործեր եւ ճարտարապետական աշխատանքներ:

Մրցանակի հավակնող ստեղծագործությունները ներկայացվում են պետական, հասարակական, մշակութային, ստեղծագործական կազմակերպությունների, հիմնարկների կողմից Հայաստանի Թեքեյան մշակութային միության հասցեով:

Ստեղծագործությունների հետ ներկայացվում են դրանք մրցանակի երաշխավորող կազմակերպությունների որոշումները մասնագիտական հիմնավորումհանձնարարականներով:

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը կազմում է մասնագիտական հանձնաժողովներ յուրաքանչյուր գեղարվեստական ժանրի գծով, որոնք ծանոթանում են ներկայացված գործերին, քննարկում եւ որոշում կայացնում մրցանակ շնորհելու մասին:

Մրցանակի կարող են արժանանալ ստեղծագործությունների հեղինակները, ինչպես նաեւ (բատերական, կինոնամատագրական, երաժշտական երկերի դեպքում) դերասանները եւ երաժիշտ-կատարողները:

1994 թ. ընթացքում հրապարակված գործերը մրցանակի են ներկայացվում 1995 թ.-ի հունիսի 15-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ներառյալ:

Մրցանակներ շնորհելու որոշումը հրապարակվում է 1995 թ. հոկտեմբերին:

Հասցե՝ Աբովյան 14, «Երեւան» հյուրանոց, 210:
Հեռ.՝ 581933

digitised by A.R.A.R.@

Մարզական

ԳԱՎԱԹԱԿԻՐՆԵՐԻ ԳԱՎԱԹ

«Արարատի» անհաջող խաղը

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ինչպես տեղեկացրեց «Արարատի» գլխավոր մարզիչ Սամվել Դարբինյանը, արարատցիները խենց հնարավորություններից ցածր հանդես եկան: Ճիշտ է, մինչեւ 25-րդ րոպեն մեր ֆուտբոլիստներն ցիրում էին նախաձեռնությունը, սակայն ընդամենը 3 րոպեի ընթացքում հնարավորություն տվեցին դաշտի տերերին վճռել խաղի ելքն իրենց օգտին: 27-րդ րոպեին աջ դաշտյան Բարսոս Կարվանը եզրից գնդակն ուղարկեց տարանային հրադարակ, եւ վրա հասած Բիլսկին մոտ տարածությունից բացեց խաղի հաշիվը: 29-րդ րոպեին դաշտի տերեր ստացան անկանոնային հարվածի իրավունք: Կարվանը գլխի հարվածով կրկնադասկեց հաշիվը: Առաջին կեսում արարատցիներից հիշարժան է միայն Սերգեյ Արզումանյանի հարվածը 20 մ հեռավորությունից: Երկրորդ կեսում Արմեն Շահգելդյանը լավ հնարավորություն ստացավ կրճատել հաշվի տարբերությունը: Նա մեն-մենակ մնաց դարպասապահի դեմ: Սակայն գլխով հարվածը շեղ ստացվեց: Լեւոն Ստեփանյանի 30 մ հեռավորությունից ուժեղ հարվածն էլ տրավորիչ էր: «Արարատի» դարպասապահ Հարություն Աբրահամյանը 72-րդ րոպեին լուրջ վնասվածք ստացավ, եւ նրան փոխարինած Արմեն Պետրոսյանը իր հերթին բազմիցս փրկեց «Արարատին» վերահաս գոլերից: 86-րդ րոպեին թիմի ավագ Արամայիս Տոնոյանը հիշ մնաց տարանային հարվածով գրավեր մրցակցի դարպաս: Իր թիմին հրաշով փրկեց դարպասապահ Յոյկոն: Դաշտի տերերը նույնպես ունեին բազմաթիվ գոլային դրսեւորումներ: Սամվել Դարբինյանի բնորոշմամբ, հույսերը չարդարացրին Հայաստանի հավաքականի անդամներ Լեւոն Ստեփանյանը, Արա Նիգոյանը, Արմեն Շահգելդյանը, Սերգեյ Արզումանյանը եւ Տիգրան Գասդեյանը: Ինչ խոսք, երկու գնդակի տարբերությունը ամրության մեծ դաշար է: Սակայն օգոստոսի 24-ին Երեւանում կայանալիք դաշտասխան խաղում դեռ ամեն ինչ կորած չէ:

«Արարատ» ակումբի ղեկավարները եւ գլխավոր մարզիչը լրջորեն դժգոհ էին թիմի եւ հատկապես առանձին ֆուտբոլիստների խաղից: Ակումբը նախագահ Դմիտրի Մարտիրոսյանի ստորագրությամբ հատուկ դիմում է հղել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմենակ Սարգսյանին եւ ՀՀ հավաքականների գլխավոր մարզիչներ Սամվել Դարբինյանին ու Սամվել Պետրոսյանին, որում ասվում է. «Գտնում ենք, որ ՀՀ հավաքականներում ընդգրկված ֆուտբոլիստներ Ա. Նիգոյանը, Լ. Ստեփանյանը, Է. Հայրապետյանը, Հ. Հարությունյանը եւ Ա. Ոսկանյանը չեն կարող ընդգրկված լինել ՀՀ հավաքականներում համապատասխան դաստիարակություն չունենալու, իսկ Հ. Աբրահամյանը լուրջ վնասվածք ունենալու դաշտճառով»: Գործընկալնում հազվադեպ է որեւէ ակումբ հոժարակամ հրաժարվում, որ իր խաղացողներին ընդգրկեն հավաքականներում: Սա վկայում է «Արարատ» ակումբի արտագավ մոտեցումը մեր հավաքականների հոգսերին:

Այսօր ՀՀ ազգային հավաքականը կսկսի նախապատրաստվել օգոստոսի 16-ին Երեւանի «Հրազդան» մարզադաշտում կայանալիք Եվրոպայի առաջնության Հայաստան-Դանիա խաղին: Ժամը 19-ին մայրաքաղաքի «Նայիրի» մարզադաշտում տեղի կունենա առաջին դարապմունքը: Ըստ Սամվել Դարբինյանի հավաքականում լուրջ վնասվածքներ են տրատվում: Արդեն Մոսկվայից Երեւան է ժամանել հավաքականի փորձառու խաղացողներից մեկը Սարգիս Հովհաննիսյանը: Նրա թիմը Մոսկվայի «Լոկոմոտիվը» շարունակելով հաղթարշավը Ռուսաստանի առաջնության հերթական տուրում, արտագնա խաղում 3-2 հաշվով հաղթել է Տյումենի «Դինամո-Գազովիկ» թիմին եւ վաստակելով 40 միավոր ընթանում է 2-րդ տեղում: «Լոկոմոտիվը», օգտվելով առաջնությունում վաղ դադարից, մրցաշրջագայության է մեկնել Իսպանիա, իսկ մինչ այդ երեկ, Փարիզում ուժերը չափել է Ֆրանսիայի գավաթակիր «Պարի Սեն-Ժերմենի» հետ: «Լոկոմոտիվի» մարզիչ Յուրի Սյոմինը խնդրել էր Սարգիս Հովհաննիսյանին մասնակցել գոնե փարիզյան խաղին, սակայն ազգային հավաքականի շահերն ավելի բարձր են:

ՔԱՍԿԵՏԲՈԼ

«Երազանքի 3-րդ թիմը»

ԱՍՏԱՂԻՆ ԲՈՅԱՋՅԱՆ

Փարիզ

Բասկետբոլի սիրահարները լավ են հիշում 1992 թ. Բարսելոնում տեղի ունեցած օլիմպիական խաղերի բասկետբոլի տղամարդկանց մրցաշարը, որտեղ առաջին անգամ օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք ստացած պրոֆեսիոնալ բասկետբոլիստներից Ամերիկայի հավաքականի գերաստղերը իսկական մարզական ներկայացում ներ տվեցին: Այդ հրաշալի հավաքականին կնքեցին «Երազանքի թիմ» անունով: ԱՄՆ-ի հավաքականում հավաքագրված էին համաշխարհային բասկետբոլի այնպիսի վառ աստղեր, ինչպիսիք են Մայքլ Ջորդանը, Մեջիք Ջոնսոնը, Լարրի Բյորդը, Չարլզ Բարկլին եւ ուրիշներ: Անցյալ տարի ԱՄՆ հավաքականը զգալիորեն փոփոխված կազմով, որին կոչեցին «Երազանքի 2-րդ թիմ», Տորոնտոյում առանց դժվարության դարձավ աշխարհի չեմպիոն: Հիմա հերթը «Երազանքի 3-րդ թիմինն» է, որը սկսել է նախապատրաստվել Ատլանտայում կայանալիք օլիմպիական խաղերին: Այս հավաքականում «Երազանքի 1-ին թիմի» կազմից ընդգրկված են 4 բասկետբոլիստներ՝ Ստոկտոնը, Պիպենը, Դեվիդ Ռոբինսոնը եւ Կարմալոնը: Դեվիդ Ռոբինսոնն այս տարի ճանաչվել է ԱՄՆ-ի պրոֆեսիոնալ բասկետբոլի առաջնության (NBA) լավագույն խաղացող: «Երազանքի 3-րդ թիմում» ընդգրկվել է նաեւ NBA-ի անցյալ տարվա լավագույն խաղացողը՝ 211 սմ հասակ ունեցող Հաքիմ Օլաջուվոնը, որը ծագումով նիգերիացի է: Օլաջուվոնի գլխավորությամբ Հյուստոնի «Ռոկկետս» թիմը վերջին երկու տարիներին դարձավ NBA-ի չեմպիոն: Օլիմպիական հավաքականում ընդգրկվել է նաեւ Շարլ Օ'Նիլը, տաղանդավոր մի բասկետբոլիստ, որն անցյալ տարի աշխարհի առաջնությունում ճանաչվեց լավագույն խաղացող: Շարլ Օ'Նիլի հասակն է 215 սմ: «Երազանքի 3-րդ թիմ» կազմում հայտավորվել են նաեւ երիտասարդ խաղացողներ Գլեն Ռոբինսոնը, Հիլը, ինչպես նաեւ խաղարկող ներ Հարդ Ուեյը եւ Ռեջի Միլլերը: Մասնագետների կարծիքով, որեւէ թիմ չի հասնի «Երազանքի 1-ին թիմին»: Բայց կարող է կրկնել նրա հաջողությունը եւ հասդել օլիմպիադայում: Անկրկնելի են Մայքլ Ջորդանը, Մեջիկ Ջոնսոնը, Լարրի Բյորդը: «Երազանքի 3-րդ թիմում» դեռ երկու բափուր տեղ կա, եւ շատերը հուսով են, որ կիրավիրեն նաեւ Մեջիկ Ջոնսոնին՝ բասկետբոլային կախարդին, որը սրիդի վիրուսակիր լինելու պատճառով բողել է մրցասպարեզը: Ինքը՝ Ջոնսոնն էլ ուզում է վերադառնալ հավաքական: Բայց ահա Մայքլ Ջորդանը եւ Չարլզ Բարկլին պատշաճաբար հրաժարվել են խաղալ «Երազանքի 3-րդ թիմում»: Այնպես որ, Ատլանտայում բասկետբոլի սիրահարները կտեսնեն իսկական «Երազանքի թիմի» խաղացողների մի մասին:



Սկոտտի Պիպենը եւ Մայքլ Ջորդանը

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Օ՜հ, իմ ասված...

ԳԵՐԳՈՐ ԱՄԻԲՅԱՆ

Վայանս, Ֆրանսիա

Երբ բրիտանական մարզադաշտերը հանախ դատնում են կռիվների եւ խուլիգանական վայրագությունների ասպարեզ, վերջերս դարձել են նաեւ սեմուալ ադարների բեմ: Այսպես, մարզական խոշոր միջոցառումների ժամանակ, մի խումբ ընկերներ իրար հետ գրազ գալով լեփ-լեցուն տրիբունաների աչքի եւ հատկապես հեռուստախցիկների առջեւ մերկ վիճակում վազում են մարզադաշտով մեկ: Սա արդեն բրիտանական մոդեռն մարզաձեւ է դարձել: Վերջերս «Օլդ Տրեֆորդ» մարզադաշտում Անգլիայի եւ Հնդկաստանի միջեւ տեղի ունեցած կրիկետի (անգլիական խաղ) միջազգային հանդիպման ժամանակ մարզասեր աղջիկներից մեկը կրծքերը բաց վազեց մարզադաշտի մեկ ծայրից մյուսը: Մարզադաշտի հսկիչներն արագորեն եւ սիրով նետվեցին «հանցագործի» վրա նրան բռնելով եւ ստիպելով հագնել հագուստը: Ծովափնյա քաղաքներում կազմակերպվող մերկ մանեկենների մրցումներում այս աղջկա կրծքերի չափերը եւ մարմնական համաչափությունը կարող էին

նրան դարձնել մեդալ: Բայց «Օլդ Տրեֆորդ» մարզադաշտում նա ոչ մի մեդալի չարժանացավ...

ՇԱԽՄԱՏ

Կրկին երկիշխանություն

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը շարունակվող շախմատի տղամարդկանց բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրում ոչ ոքի արձանագրվեց գրոսմայստերներ Ասոս Անասասյանի եւ Արշաքես Մինասյանի միջեւ: Դա հնարավորություն տվեց գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանին, որը սպիտակներով հաղթեց գյումրեցի Արա Մինասյանին, միավորներով հավասարվել առաջատարին՝ Արշաքես Մինասյանին: Արշաքես անհաջող սկսած գրոսմայստեր Արշակ Պետրոսյանը 3-րդ հաղթանակը տարավ մրցաշարում, այս անգամ սպիտակներով առավելության հասնելով Վիգեն Միրումյանի նկատմամբ: Միրումյանն ուներ զգալի առավելություն, սակայն երկուսեք ուժեղ ցայտնոտում վրիպումներ թույլ տվեց եւ ցավալի պարտություն կրեց: Միջազգային վարպետ Տիգրան Նալբանդյանը սպիտակներով առավելության հասավ միջազգային վարպետ Արսեն Եղիազարյանի նկատմամբ: Ոչ ոքի ավարտվեցին Լոյտյան-Քալանթարյան, Խաչիյան-Ասրյան հանդիպումները: Վեց տուրից հետո մրցաշարային աղյուսակում երկիշխանություն է: 4,5 ական միավոր են վաստակել գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանն ու Արշաքես Մինասյանը: 4 միավորով 3-րդ տեղում է Տիգրան Նալբանդյանը: 3,5 ական միավոր են վաստակել գրոսմայստերներ Անասասյանը, Լոյտյանը եւ Պետրոսյանը: Սակայն Անասասյանը մեկ խաղ պակաս է անցկացրել:

ՍԱՍՊԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Շումախերն ամուսնացավ

Կորինթոսի հարսնացուի հանդերձանքով

Նրա անունը Կորինա է: Նա Կերոլեն խաղախաղտարանում «այո» ասաց, որպեսզի դառնա «Ֆորմուլա-1»-ի աշխարհի չեմպիոն Միխայել Շումախերի կինը: Շումախերը «Ֆորմուլա-1»-ի բոլոր էր, որպեսզի գեղեցկուհի Կորինային հասցնի խոստումի վայրը խաղախաղտարան: Շումախերը ծանվել է հենց Կերոլեն խաղամում: Նա շիկահեր Կորինային խոստացել է նաեւ իր հետ տանել «Ֆորմուլա-1»-ի «Գրան պրիի» մրցումներին: Շումախերի եւ Կորինա Բեշի ամուսնության նկարահանումների արտոնությունները 500 հազար մարկի եկամուտ են բերել: Շումախերը մտադիր է այդ գումարը հանձնել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ աղքատ երկրների աղքատը գարգացնելու համար:

Գ. Ա.

ԽԾԱՆԿԱՐ

Միշել Իդալգոն կժամանի Երեւան

Ֆուտբոլի հանրահայտ մասնագետ Միշել Իդալգոն, որը որպես գլխավոր մարզիչ Ֆրանսիայի հավաքականին օգնեց 1984 թ. նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, օգոստոսի 14-ին կժամանի Երեւան, որպեսզի նեկա գտնվի աշխարհամասի առաջնության Հայաստան-Դանիա հանդիպմանը: Նրան ուղեկցելու է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվավոր անդամ ու բարերար Ալբերտ Աղաբանյանը: Այս խաղը լուսաբանելու են 41 դանիացի լրագրող: Երեւան են ժամանելու նաեւ բելգիացի ֆուտբոլային մեկնաբաններ: ԼՏ

«Նայիրիսը» հինգերորդն է

Բյոլնում անցկացվեց 1978-80 թթ. ծնված ֆուտբոլիստների միջազգային մրցաշար, որին մասնակցեց նաեւ Երեւանի «Նայիրիսը»: Իրենց ենթախմբում պատանի երեւանցիներն նախ 1-6 հաշվով զիջեցին Իտալանդիայի «Դեւոնին», ապա առավելության հասան՝ Փոքրի «Կոլխիդա» (2-0) եւ գերմանական «Սարուկենբրոֆ» (3-0) թիմերի նկատմամբ: Ենթախմբում գրավելով երկրորդ տեղը, «Նայիրիսը» իրավունք ստացավ վիճարկել 4-6-րդ տեղերը: 3-0 հաշվով վստահորեն պարտության մատնելով գերմանական «Օբերհաուզենին», հայ ֆուտբոլիստները 12 թիմերի մեջ գրավեցին 5-րդ տեղը: ԼՏ

Թուրքմեն ֆուտբոլիստները Ծաղկաձորում

Թուրքմենիայի եռակի չեմպիոն Ասգաբադի «Կոպետ Դաղ» թիմը տասնօրյա հավաք անցկացրեց Ծաղկաձորում, նախապատրաստվելով Թուրքմենիայի առաջնության երկրորդ շրջանի խաղերին: Ծաղկաձորում կայացավ թուրքմեն ֆուտբոլիստների ընկերական հանդիպումը Արարատի «Ցեմենտի» հետ: Խաղն ավարտվեց ոչ ոքի՝ 0-0: ԼՏ

ՖՈՒՏԲՈԼ

Ռուդ Գուլիտի հրաժարականը վան Բաստենի օգտին էր

Երեւի ֆուտբոլի սիրահարներից էլեր գիտեն, որ ծնկային հոդի լուրջ վնասվածք ստացած եւ ատաղձագործ վաղուց բողած անվանի հարձակվող Մարկո վան Բաստենը ԱՄՆ-ում տեղի ունեցած աշխարհի 15-րդ առաջնությունում պատշաճաղես հայտավորված էր Հոլանդիայի հավաքականում: Բանն այն է, որ հոլանդացիներ դեռ հուսով էին, որ Ռուդ Գուլիտը այնուամենայնիվ կփոխի իր որոշումը եւ կհամաձայնվի խաղալ հավաքականում: Նրա հրաժարականը մեծապես հուզել էր հոլանդացիներին, բայց միեւնույն ժամանակ ճանապարհ բացել Մարկո վան Բաստենի համար: Գուլիտը իր խոսքից չհրաժարվեց: Հավաքականում 22-րդ տեղը բափուր էր եւ այն հատկացվեց Մարկո վան Բաստենին: 1992 թ. հոկտեմբերից ի վեր վան Բաստենը չի խաղացել Հոլանդիայի հավաքականում:

Բաժինը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

«ՍԱՆՏՈՒՐՍ»
ֆիրման առաջարկում է

10 ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Բուլղարական «ՍԱՆՏՈՒՐՍ» ֆիրման յուրաքանչյուր 10 օրը մեկ կազմակերպում է ուղիղ թռիչք

ԵՐԵՎԱՆ - ԼԱՌՆԱԿԱ (Կիպրոս):

Զբոսաշրջիկների խմբերը ստրոնեն հանգստանում են արեւաշող Կիպրոս կղզում

Առաջիկա թռիչքները՝ օգոստոսի 15, 24-ին:

Բարձրակարգ հյուրանոց (ծովից 100մ հեռավորության վրա)
Երկտեղանոց համարներ (հեռախոս, հեռուստացույց, սառնարան, խոհանոց)
3-օրյա էքսկուրսիա (կանկապողների համար) ՊՈՐՏ - ՍԱՅԴ (Եգիպտոս) եւ ԵՐՈՒՍԱՂԵՄ կիպրական օվկիանոսային «Ավլանտե» ջերմանավով:
Ուղեգրի արժեքը $460 + 96.000 դր.

Ֆիրման առաջարկում է նաեւ 2-շաբաթյա հանգիստ Բուլղարիայի «Զոլոտիե Պեսկի» ծովափում ($320 + 120.600դր.) եւ մասնավոր վիլլաներ Նեսեբր առողջարանում ($420):

Վճարումը՝ համարժեք դրամով, կանխիկ կամ փոխանցումով

«ԱՆԻ» հյուրանոց, 512, 523, 530 սենյակ (ՈՒՅՈՒՏ ֆիրմայի գրասենյակ)
Հ.Պարոնյանի փ. 1 (Ձկան խանութի դիմաց)
եւ Ղ. Փարպեցու 22 (նախկին Ղուկասյան)
Հեռ. 52-42-65, 59-45-12, 53-15-00, 59-45-23, 56-51-08

Հ Ա Յ Ն Ե Ր Ա Ր Տ Բ Ա Ն Կ

Հայներարտբանկը վաճառում է անշարժ գույք եւ սարքավորումներ

	Անվանումը	Հասցեն	Գույքի բնութագիրը
1.	Հյուրանոցի մասնաբաժնի	Երեւան Ամառանոցային թիվ 250	5 հարկ. ընդհ. մակերեսը՝ 2464, 35 քմ բնակելի՝ 655,2 քմ. համարների քանակը՝ 55
2.	Բնակելի տուն հողամասով	Նախիջեւանի շրջան. գ. Եղվարդ. Նար-Դոսի 2-րդ փող. թ. 7	2 հարկ նկուղով. ընդհ. մակերեսը 285,4 քմ, բնակելի 239,7 քմ. հողամաս՝ 1040 քմ
3.	Բնակելի տուն հողամասով	Երեւան, Գազարինի 1ա	1 հարկ. ընդհ. մակերեսը 89,1 քմ. բնակելի՝ 40 քմ. հողամաս՝ 309 քմ
4.	Բնակելի տուն հողամասով	Թալինի շրջան. գ. Աշնակ	2 հարկ նկուղով. ընդհ. մակերեսը՝ 621,0 քմ. բնակելի՝ 296,7 քմ. հողամաս՝ 2200 քմ
5.	Բնակելի տուն հողամասով. արտադրամաս	Երեւան, Պ. Տիչինայի փող. 57	2 հարկ մանսարդայով. ընդ. մակերեսը՝ 750 քմ. հողամաս՝ 352 քմ
6.	Խանութ	Երեւան, Նորքի 9 գ. 6 շ.	1 հարկ նկուղով. ընդհ. մակերես՝ 302, 65 քմ
7.	2 սենյականոց բնակարան	Երեւան, Նորքի 2 գ. 53 շ., թ. 15	5 հարկանի շենքի 5-րդ հարկ. ընդհ. մակերեսը՝ 47,2 քմ. բնակելի՝ 30,2 քմ.
8.	4 սենյականոց բնակարան	Երեւան, Վիլնյուսի փող. 9 շ., թ. 18	9 հարկանի շենքի 5-րդ հարկ. ընդհ. մակերեսը 91,61 քմ. բնակելի՝ 54,71 քմ
9.	Բնակելի տուն հողամասով	Կոտայքի շրջան. գ. Բալահովիտ	2 հարկանի բնակելի տուն. ընդհ. մակերեսը՝ [illegible] քմ. հողամաս՝ 900 քմ.
10.	Բնակելի տուն հողամասով	Երեւան, Մանուշյան փող. 49	2 հարկանի բնակելի տուն. ընդհ. մակերես՝ 340 քմ բնակ. մակերեսով 88,32 քմ հողամաս՝ 432 քմ
11.	Բնակելի տուն հողամասով. խանութ	ք. Արտաշատ. Աբարբեկյան 89 տուն. Շահումյան 36 գ	ընդհ. մակերես՝ 72,8 քմ թ. մակերես՝ 50,3 քմ. հողամաս՝ 700 քմ ընդհ. մակերես՝ 140,4 քմ. ծավալը՝ 477,3 խմ

) Հյուրանոցի մասնաբաժնը կարող է տրամադրվել նաեւ վարձակալության հիմունքներով:

ՄԵՔԵՆԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Ոգելից խմիչքների, կահույքի, ոտահագուստների, կոշիկի, կաղի, մեխանիկական, քիմիական եւ այլ արտադրությունների հետ կապված մեքենաներ եւ սարքավորումներ (165 անվանում)
2. Գործվածքեղենի եւ կաղի արտադրության հետ կապված մեքենաներ եւ սարքավորումներ, արտադրական մասնաբաժին (19 անվանում)

Ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նալբանդյան 2, Հայներարտբանկ, վարկերի եւ ավանդների դեպարտամենտ, հեռ. 56-43-21, 56-71-51:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

էժան գնով սեփականացրած խանութ (120մ²): Հասցեն՝ Դավիթ Բեկ փող.:
Հեռ. 531773, 531017

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

էժան գնով հավի ձտեր Զանգահարել 643054 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

ՀՈՂԱՄԱՍ-ԱՅԳԻ 500 քմ տարածությամբ, Ջորաղբյուրի 2-րդ զանգվածում: Զանգահարել 58-18-41 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 15-22-ը Երեւանի Արմէքսոր (Զարեխի) ցուցահանդեսում կազմակերպվում է Իրանի Իսլամական Հանրապետության առրանքների ցուցահանդես վաճառք: Ցուցահանդեսը կաշխատի ամեն օր ժամը՝ 11-19-ը:

ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԵՎԱՆԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

առաջարկում է ներքոհիշյալ տուրիստական երթուղիները

ԵՐԵՎԱՆ-ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ՇՈՒՇԻ-ԵՐԵՎԱՆ

3 օրում զբոսաշրջիկները ոչ միայն կծանոթանան Արցախի հերոսական անցյալին, այլեւ կայցելեն խենց հարազատներին

ԵՐԵՎԱՆ-ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՎԱՆ

7-օրյա ճամփորդությունը Թեհրանում կանցկացնեն քաղաքի կենտրոնական բարձրակարգ հյուրանոցում: Մեր աշխատակիցները զբոսաշրջիկներին կօգնեն նրանց մոտ առաջացած բարդությունների հարթման գործում:

Եւ իհարկե, այսօրվա համար անհրաժեշտ է երեւանյան տաքից ազատվելու համար 12 օրով Բյուրականում Անտառոս գյուղից 2,5 կմ հեռավորության վրա գտնվող դանիսիանատում հանգստանալը, որտեղ հանգստացողները կաղաքակրթվեն կոմունալ հարմարություններով, տաք ջրով եւ էլեկտրականությամբ, հարմարավետ սենյակներով: Ուղեգրի արժեքը՝ 24 000 դրամ: Երեխաների համար զեղչ գներ:

Մեր հասցեն՝ Երեւան, Զաքիյան 8, «Շիրակ» հյուրանոցի մոտ, մանկական այգու դիմաց, հեռ. 56-47-07, 58-67-05 52-67-23, 58-68-40

ՍՓՅՈՒՌ
տեղեկատու

ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ

■ «Սփյուռ» տեղեկատուն Գյումրի, Հոկտեմբերյան, Արովյան, էջմիածին, Աշտարակ քաղաքներից հրավիրում է աշխատանքի բարձրագույն կրթությամբ, ռուսերենին տիրապետող, երիտասարդ, եռանդուն անձանց նշված քաղաքներում «Սփյուռ» տեղեկատուի ներկայացուցիչ աշխատելու համար:

Դիմել օգոստոսի 14-ից 18-ը հետեւյալ հասցեով. Երեւան, Փ. Բուզանդի 1/3, («Վերնիսաժի» տարածքում):

Նախնական տեղեկությունների համար զանգահարել 58-13-51 կամ 58-91-67:

ԲԱՆԿ Կրեդիտ-Երեւան

"Կրեդիտ-Երեւան" բաժնետիրական առեւտրային բանկը ընդունում է ավանդներ դրամով և ԱՄՆ դոլարով, 3-ամիս ժամկետով, տոկոսների ամսական կամ եռամսյակային վճարմամբ, հետեւյալ տոկոսադրույքներով.

դրամով
1 ամիս - 4 %
3 ամիս - 15 %

Ընդունվող ավանդների նվազագույն չափը՝
200.000 դր.
կամ
300 ամերիկյան դոլար

ԱՄՆ դոլարով
1 ամիս - 2,5%
3 ամիս - 9%

Նշված տոկոսադրույքներով ավանդները ընդունվում են մինչև 1995թ. հոկտեմբերի 1-ը:

"Կրեդիտ-Երեւան" բանկ
Վռամշապուհ Արքայի 2/8
հեռ. 56-60-17

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արտաքինաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1919 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 11. 08. 1995 Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@